

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 1 **Ընկերության նկարագիրը**
- 2 **Նախորդ պլանային ժամանակաշրջանի նպատակները և խնդիրները և կատարողականը**
- 3 **Ընկերության առաքելությունը**
- 4 **Ընկերության նպատակները**
- 5 **Ընկերության գործունեության հիմնական ուղղությունները**
- 6 **Ընկերության արտաքին միջավայրում հնարավոր երևույթների կանխատեսում**
- 7 **Ընկերության զարգացում (2020-2025թթ)**
- 8 **Ընկերության հեռանկարային զարգացում**
- 9 **Ընկերության տարածաշրջանային օպտիմալացում**

<<ԱԼԱՎԵՐԴՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ-ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՆԳ ՏԱՐՎԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ 2020-2025թթ

ՆԱԽԱԲԱՆ

1. <<Ալավերդու բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունը համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի կանոնադրական կապիտալը բաժանված է

ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի: Ընկերությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. նոյեմբերի 2-ի <Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին> թիվ 1911-Ն որոշման համաձայն:

<<Ալավերդու հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերության (գրանցված է Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 10.12.1996թ., վերակազմավորման գրանցման օրը՝ 21.04.1998թ. գրանցման թիվ՝ 12.140.00348, վկայական՝ 01 Ա 030308, գտնվելու վայրը՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, Ջրավազանի 1), <<Ալավերդու ծննդատուն>> պետական փակ բաժնետիրական ընկերության (գրանցված է Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 18.12.1996թ., վերակազմավորման գրանցման օրը՝ 21.04.1998թ. գրանցման թիվ՝ 12.140.00353, վկայական՝ 01 Ա 030489, գտնվելու վայրը՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, Շահումյան 2) և <Ալավերդու պոլիկլինիկա>> պետական փակ բաժնետիրական ընկերության (գրանցված է Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 10.12.1996թ., վերակազմավորման գրանցման օրը՝ 21.04.1998թ. գրանցման թիվ՝ 12.140.00349, վկայական՝ 01 Ա 030309, գտնվելու վայրը՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, Սայաթ-Նովա 20) միաձուլման միջոցով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրանց իրավահաջորդը՝ փոխադարձ ակտերին համապատասխան (**միաձուլվող ընկերությունները գրեթե ենթակա էին լուծարման, որոնց հարցը մի քանի անգամ քննարկվեց ՀՀ Կառավարությունում**): Բժշկական կենտրոնը ձևավորման պահին ժառանգություն ընդունեց քառասուներկու միլիոն դրամ կրեդիտորական պարտքեր, հիմնանորոգման ենթակա մասնաշենքեր, բազում տնտեսական խնդիրներ և ինչը վատթարագույն էր, վերջին տարիներին հուսալքված, սեփական ուժերի նկատմամբ հավատը, արժանապատվությունն ու իրենց առաքելության իմաստը կորցրած բժշկական անձնակազմ: Անձնակազմ, որը երդվել էր իր ողջ կյանքում ծառայել ու նվիրվել սեփական ժողովրդի առողջության ապահովման հայրենանվեր գործընթացին:

Նման պաշարով <<Ալավերդու բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն պետք է պատասխանատու լիներ Թումանյանի տարածաշրջանի չորս քաղաքային, քսանութ զյուղական համայնքների ազգաբնակչության առողջության ապահովման խնդիրներին: Երավիճակը շտկելու համար (մրցույթային արդյունքների հիման վրա) տնօրեն է նշանակվում Ս.Վ.Մոսիսյանը: Արագ մշակվում է առողջացման ծրագիր

Սկսվում է կյանքի կոչվել ծրագրում ներառված բոլոր հիմնախնդիրները:

Անձնակազմը վերապատրաստման դասընթացներ է անցնում հանրապետության, հանրապետությունից դուրս գտնվող լավագույն կլինիկաներում:

Ընկերությունը քայլ առ քայլ համալրվում է որակյալ, նեղ մասնագետներով, ովքեր մինչ օրս աշխատում են բժշկական կենտրոնում:

Բժշկական կենտրոնի մասնաշենքները, մարզերի համաչափ զարգացման ծրագրերով, ընդգրկվում են հիմնանորոգման ենթակա շինությունների ցանկի մեջ: Հիմնանորոգման ժամանակահատվածներում, երբ կենտրոնը գործում էր սանիտարահիգիենիկ, շինարարական նորմերին ու կանոններին չհամապատասխանող, ծանր շենքային պայմաններում, <<Ալավերդու բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի անձնակազմը, տնօրեն Ստեփան Մոսիսյանի ղեկավարությամբ, կարողացավ հաղթահարել բոլոր դժվարություններն ու փորձությունները, կարողացավ ապահովել բուժ հաստատության նորմալ բնականոն գործընթացը, կարողացավ ոչ միայն մարել քառասուներկու միլիոն կրեդիտորական պարտքերը, այլ նաև մոտ մեկ հարյուր միլիոն դրամ հատկացնել ընկերության շինարարության ու բժշկական սարքավորումների ձեռք բերման ներդրումներին:

Բժշկական անձնակազմը կարողացավ հաղթահարել բոլոր բարոյահոգեբանական արգելքներն ու բարդույթները, որոնք տարիների ընթացքում համակել էին իրենց:

2014թ. ավարտվեց նաև ախտաբանա-անատոմիական առանձին մասնաշենքի կառուցումը և վերազինումը: Ընդհանուր առմամբ համաշխարհային բանկը Ալավերդու ԲԿ-ի վերանորոգման և վերազինման մեջ ներդրեց մոտ 950.0մլն դրամ, իսկ Ալավերդու ԲԿ-ն 30.0 մլն դրամ, որով ավարտվեց առաջին հնգամյա զարգացման ծրագիրը, որին արագ հաջորդեց երկրորդ զարգացման հնգամյա ծրագիրը, որին կտեղեկացվենք ստորև:

Վերջնական արդյունքում Լոռու մարզի Ալավերդի քաղաքում ունեցանք սանիտարահիգիենիկ նորմատիվներին համապատասխան, լիովին հիմնանորոգված և վերազինված Ալավերդու բժշկական կենտրոն, որը հանրապետության հարյուր տոկոս բաժնետիրական ընկերությունների տասնյակում ունի իրեն համարժեք տեղը:

2015-2016թթ <<Դիակոնիա>> բարեգործական հիմնադրամի միջոցներով հիմնանորոգվեց <Ալավերդու բժշկական կենտրոն> ՓԲԸ-ի Սանահին սարահարթի բուժ կետը և թոքային հիվանդությունների դեմ պայքարի կաբինետը :Գույք սարքավորումները ձեռք բերվեց <<Բժիշկներ առանց սահմանի>> և <<Վորլդ Վիժն>> կազմակերպությունների և <<Ալավերդու բժշկական կենտրոն>> ՓԲԸ միջոցների հաշվին: Եվ այժմ այն գործում է սանիտարահիգիենիկ չափորոշիչներին համապատասխան նորմատիվներով:

2018թ մարզի հրատապ ծրագրերի շրջանակներում հիմնանորոգվեց Ակներ բուժակ մանկաբարձական կետը և նույն տարեթվին Մանուկներ հիմնադրամի ֆինանսական միջոցների և ԱԲԿ –ի միջոցներով հիմնանորոգվեց Մեծ Այրումի ԲՄԿ-ն:

Համազգային վստահության խորհրդի կողմից 2014թ. <<Հուսո Աստղ>>

մրցանակաբաշխությունում <<Ալավերդու բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն արժանացավ <<Տարվա մարզային հիվանդանոց>> անվանակոչմանը:

2015թ արժանացել է ՀՀ կառավարության արտադրանքի և ծառայությունների ապահովման բնագավառում <<Որակի մրցանակին>>:

2015թ համաշխարհային բանկի վերազինումից հետո <<Ալավերդու բժշկական կենտրոն>> ՓԲԸ –ն համագործակցեց ԱԳԲԱ Լիզինգ վարկային կազմակերպության հետ (մոտ 23.849.0 հազ դրամ) , որի արդյունքում ձեռք բերվեցին՝ աուդիոմետր,դյուրակիր ռենտգեն ապարատ, տեսալարինգոսկոպ, տրեդմիլ, սպիրոմետր, պարաֆինապատող սարք, դիզելային գեներատոր ,կարդիոէլեկտրոնային ծրագիր:

2016թ Պառլամենտ հասարակական քաղաքական ամսագրի կողմից անկախ փորձագիտական հարցման արդյունքում արժանացել է <<Տարվա բուժ հիմնարկ>> անվանակոչմանը:

2017թ Համազգային վստահության խորհրդի կողմից Ալավերդու ԲԿ ՓԲԸ-ի տնօրենը սոցիոլոգիական հարցումների և փորձագիտական գնահատման արդյունքում արժանացավ «Տարվա բուժկազմակերպիչ» անվանակոչմանը:

Ընկերության աշխատանքների բարեփոխումները գնահատվել են նաև վերադաս կազմակերպությունների կողմից՝ մեկ բժիշկ 2009թ. արժանացել է <Միխիթար Հերացի> մեդալի:

Մարզային բոլոր նոմինացիաներում հաղթող ենք ճանաչվել կրկնակի անգամ:

2016թ տեղի ունեցավ Ազգային բիզնես վարկանիշ միության մասնակից երկրների տնտեսության առաջնորդների մրցանակաբաշխությանը և շնորհվեց.

1.Շքանշան տնտեսության հպարտություն

2.Միջազգային հավաստագիր

Համազգային վստահության խորհրդի կողմից 2018թ. <<Հուսո Աստղ>>

մրցանակաբաշխությունում <<Ալավերդու բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն արժանացավ

<<Բազմապրոֆիլ,պրոֆեսիոնալ բուժ անձնակազմ ունեցող ժամանակակից

սարքավորումներով հագեցած տարվա բժշկական կենտրոն>> անվանակոչմանը:

2019թ ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի որոշմամբ << Նորագույն տեխնոլոգիաներով վերազինված մարզային առաջատար բժշկական կենտրոն>>

անվանակարգում << Մերկուրի>> մրցանակ շնորհվեց << Ալավերդու բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ին :

Գտնվելու վայր՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի Սայաթ-Նովա 20: Յրագրի մշակման աշխատանքները կոորդինացնող անձ՝ **տնօրեն՝ Ստեփան Վլադիմիրի Մասինյան**, հեռ՝ 25323312:

ԲԱԺԻՆ I. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԳԼՈՒԽ 1.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

<<Ալավերդու բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն ՀՀ Լոռու մարզպետարանի բազմապրոֆիլային բուժական հիմնարկ է, որը կոչված է իրականացնելու՝

Հիվանդանոցային բժշկական օգնության գծով

Ներքին բժշկական, Մանկաբուժական, Մանկաբարձական Գինեկոլոգիական, Նեոնատոլոգիական, Վերակենդանացման, Անեսթեզիոլոգիական, Ներզննական, Ախտաբանաանատոմիական Կլինիկական դեղորայքային

Հիվանդանոցային և արտահիվանդանոցային

Ընդհանուր վիրաբուժական, Վարակիչ հիվանդանոցային (ինֆեկցիոն), Վնասվածքաբանական, Տիզիոթերապևտիկ, Ֆունկցիոնալ ախտորոշիչ (ուլտրաձայնային, էլեկտրասրտագրություն), Ճառագայթային ախտորոշիչ (ռենտգենաբանական, ֆլյուորոգրաֆիկ, մամոգրաֆ.) Լաբորատոր ախտորոշիչ (կլինիկական, բիոքիմիական, սերոլոգիական, բակ լաբորատորիա, հիստոլոգիական),իմունոֆերմենտային հետազոտություններ

Արտահիվանդանոցային բժշկական օգնության գծով

Ընտանեկան բժշկություն, Բժշկական ընդհանուր պրակտիկա, Մանկաբուժական ընդհանուր պրակտիկա, Տուբերկուլոզային (ֆտիզիատրիկ), Մանկաբարձագինեկոլոգիական ընդհանուր պրակտիկա, Նյարդաբանական, Ակնաբանական, Ուռուցքաբանական, Սրտաբանական, Ներզատաբանական (էնդոկրինոլոգիական), Մաշկաբանական, Վեներաբանական, Քիթ-կոկորդ-ականջաբանական (օտորինոլորինգոլոգիական), Հոգեբուժական, Թերապևտիկ, Ստոմոտոլոգիական, Բժշկական շտապ օգնություն:

<<Ալավերդու բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ում ներկա պահին աշխատում են թվով 226 աշխատակիցներ,որից 54-ը բժիշկ,109-ը միջին բուժ.անձնակազմ , 31-ը կրտսեր բուժ.անձնակազմ և 32-ը այլ անձնակազմ:

Կենտրոնը հիմնականում սպասարկում է Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանի շուրջ քառասուններեք հազար ազգաբնակչության: Ինչպես նաև հարակից տարածաշրջանների և Վրաստանի հայաբնակ գյուղերի բնակիչներին:

ԲԱԺԻՆ I I. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 2. ՆԱԽՈՐԴ ՊԼԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ընկերության զարգացման ծրագիրը կազմվել է տնօրենի անմիջական ղեկավարությամբ, մշակման հիմքում դրվել են մատուցվող ծառայությունների որակի և մատչելիության անընդհատ զարգացումը:

ՓՈԽՎՈՒՄ ԵՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ, ՓՈԽՎՈՒՄ ԵՆՔ ՆԱԵՎ ՄԵՆՔ

Մեր նպատակներն են՝

- առողջության պահպանում,
- հիվանդությունների կանխարգելում, վաղաժամ հայտնաբերում և բուժում,
- բժշկական օգնության և սպասարկման մատչելիության ու հասանելիության ապահովում,
- մատուցվող ծառայությունների որակի բարձրացում,
- առողջ ապրելակերպի քարոզում,
- ծառայությունների ոլորտի ընդլայնում,
- բուժման նոր մեթոդների ներդրում,
- տարածաշրջանում առաջատար դիրքի գրավում

Նշված նպատակները մենք իրագործում ենք.

- մասնագիտական ճիշտ և փաստացի տվյալների վրա հիմնված որոշումներ կայացնելով,
- անձնակազմի գիտելիքները մշտապես բարձրացնելով՝ այդ թվում մասնակցելով միջազգային թրեյնինգների,
- բժշկական նոր սարքավորումներ ձեռքբերելով,
- բուժման արդիական մեթոդներ կիրառելով,
- աշխատանքային կարգապահությունը մշտապես պահպանելով:

Հիմնական հիմնանորոգումից և վերազինումից հետո Ալավերդու ԲԿ-ն արդեն երկրորդ անգամ համագործակցելով ԱԳԲԱ լիզինգ ընկերության հետ սեփական միջոցներով (մոտ 31.409.2 հազ դրամ), համաձայն նախորդ զարգացման ծրագրերի, ձեռք է բերել հետևյալ բուժ սարքավորումները և նոր բուժման ու ախտորոշիչ նորագույն մեթոդներ:

1. Լապարասկոպիկ գործիքների հավաքացու՝ ընդհանուր վիրաբուժական, գինեկոլոգիական և ուռուլոգիական վիրահատությունների հնարավորությամբ
2. Վնասվածքաբանական հիվանդությունների լիարժեք վիրահատական բուժման նպատակով ձեռք բերել (ԵՕՈՒ):
3. Երրորդ վիրասրահի համար
 - ա. անզգայացման նոր սարքի
 - բ. Էլեկտրոկոագուլյատոր
 - գ. Էլեկտրական արտածծիչ
4. Մամոգրաֆ
5. Շտապ օգնության ավտոմեքենայի արհեստական օդափոխիչ սարք
6. Մանրէաբանական լաբորատորիայի հիմնում
7. Տեսախցիկների տեղադրում
8. Անզգայացման էպիդուրալ և սպինալ մեթոդի ներդրում
9. Վերջույթների և պարանոցի դոպլեր և դուպլեքս հետազոտությունների ներդրում
10. Ծնկան հողի սոնոգրաֆիայի ներդրում

2017թ ձեռք են բերվել նորագույն սարքավորումներ և գույք: Ծախսերը իրականացվել է <<Ալավերդու բժշկական կենտրոնի>> ՓԲԸ -ի միջոցների հաշվին, որը իրականացվել է համաձայն Կառավարություն ներկայացված գործարար ծրագրի (զարգացման ծրագրի)՝

1. Պտղի զարգացման արատների և գինեկոլոգիական հիվանդությունների վաղաժամ հայտնաբերման նպատակով ձեռք է բերվել նոր ուլտրաձայնային սարքավորում, հեշտոցային սվիչով:
2. Լաբորատոր հետազոտությունների ավելի արագ, որակյալ և մեծ քանակի իրականացնելու նպատակով ձեռք է բերվել լրացուցիչ բիոքիմիական անալիզատոր:
3. Ներարգանդային կյանքում պտղի սրտային տոները գրանցելու նպատակով, կանանց կոնսուլտացիայի համար ձեռք է բերվել կարդիոտոկոգրաֆ:
4. Սրտային հիվանդությունների ախտորաշման նպատակով ձեռք են բերվել արյան ճնշման և ԷՍԳ խոլտեր սարքավորումներ:
5. Ակնաբուժական կաբինետի համար ձեռք է բերվել աչքի ճնշման չափման ժամանակակից սարք:
6. Կատարվել է բժշկական կենտրոնի թիթեղային տանիքի վերանորոգում՝ ցինկապատ թիթեղների մաքրում, նախաներկում և ներկում հակակոռոզիոն ներկով, բացի ստացիոնար հատվածից:
7. Այլընտրանքային էլեկտրասնուցման աղբյուրի ստեղծում:
8. 24 ժամյա ջրամատակարարման ապահովում
9. Հեռակա բժշկական ծրագրի ստեղծում
10. Ինքնուրույն ծննդալուծման դեպքում (ցանկացած դեպքում) ներդնել անզգայացման մեթոդ:

11. Արյան բանկի ստեղծում
12. Առողիումետր
13. Դյուրակիր ռենտգեն ապարատ
14. Տեսալարինգոսկոպ
15. Տրեդմիլ ASPEL B 612
16. Սպիրոմետր
17. Ստեղծել թթվածնային ամբար
18. Ստեղծել դիզ վառելիքով կաթսայատան շահագործման մեխանիզմ
19. Ստեղծել շտապ օգնության ֆելդշերական երկրորդ բրիգադ

ԳԼՈՒԽ 3.ՆԱԽՈՐԴ ՊԼԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բժշկական կենտրոնում, ստեղծման օրվանից, մշտապես մշակվել են զարգացման տարեկան , քառամյա և հեռանկարային պլաններ:

Նշված պլանների հետևողական և նպատակաուղղված իրականացման շնորհիվ յուրաքանչյուր տարի աճել են բժշկական կենտրոնի ֆինանսական մուտքերը:

Կազմակերպության ստեղծման պահին ֆինանսական մուտքերը կազմել են 221370.4,որից պ/պ գծով- 196213.0հաղ դրամ , վճ/ծ- 23027.4 հազ.դրամ,այլ վճ/ծ-2130.0հազ դրամ: Տարիների տքնաջան և նպատակաուղղված աշխատանքի շնորհիվ 2018թ ֆինասական մուտքերը կազմեցին պետ պատվերի գծով - 339825.0հազ.դրամ, իսկ վճարովի ծառայությունների գծով 104172.0 հազ,դրամ

Ներկայումս բժշկական կենտրոնը իր զարգացման ծրագրերը կանխատեսում է իրականացրել սեփական , լիզինգային ,վարկային , օվերդրաֆտ վարկային գծի և դոնոր կազմակերպությունների միջոցներով:

Ընկերության ղեկավարությունը գործնական քայլեր է կատարում կենտրոնի կողմից մատուցվող բուժծառայության որակի ապահովման և անընդհատ բարելավման ուղղությամբ: Այդ նպատակով, ընկերության ղեկավարությունը ձեռնարկել և ձեռնարկում է բոլոր միջոցառումները, որոնք անհրաժեշտ են բուժծառայության որակը պատշաճ մակարդակով պահպանելու, որակի վրա ներազդող բոլոր գործառույթների, ընթացակարգերի մշակման և հաստատման, ներդրումների ծրագրերի և տեխնոլոգիական գործընթացների պարբերական վերանայման համար: Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ տեղերում ստեղծվել են անհրաժեշտ բարենպաստ պայմաններ, որպեսզի սպառողների(հիվանդների) սպասարկումը կատարվի հնարավոր ամենաբարձր մակարդակով:

Վճարովի ծառայությունների գների հաշվարկման հիմքում դրվում են տնտեսագիտական վերլուծությունները, դրանք համեմատելով միջին հանրապետական ցուցանիշների հետ և շահառուների ֆինանսական միջոցների հետ:

Բժշկական կենտրոնում ղեկավարությունը մասնակցություն է ունեցել կառավարման համակարգերի մշակմանը և ներդրմանը:

Ընկերությունում որոշված են վերը նշված գործընթացների հաջորդականությունը և փոխազդեցությունը, չափանիշներն ու մեթոդները, որոնք անհրաժեշտ են ինչպես այդ գործընթացների իրականացման, այնպես էլ դրանց կառավարման ժամանակ արդյունավետությունն ապահովելու համար:

Բժշկական կենտրոնը ապահովված է համապատասխան ռեսուրսներով և տեղեկատվությամբ, կատարվում են նշված գործընթացների ընթացաստուգում, չափում և վերլուծություն, ձեռնարկվում են միջոցներ պլանավորված արդյունքների հասնելու և անընդհատ բարելավելու համար:

Տնօրենը կառավարման համակարգի գործընթացների կատարումը համարում է պարտադիր կազմակերպության կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների համար, որոնք ընդգրկված են այդ համակարգում:

Ընկերությունը համալրված է բարձրակարգ մասնագետներով: Ծառայությունները և բաժանմունքները ղեկավարում են հմուտ, բազմալաստակ, բանիմաց մասնագետներ, որոնց աշխատանքը բարձր է գնահատվում հանրության և վերադաս մարմինների կողմից: Աշխատակազմի և առանձին այլ ներկայացուցիչների ներգրավմամբ անձնակազմը մշակել է կադրային քաղաքականությունը, մշակել անձնակազմի աշխատանքի ընդունման, ուսուցման և որակավորման բարձրացման, ատեստավորման ծառայողական տեղաշարժման, խրախուսման ու խթանման ընթացակարգեր: Ղեկավարությունը հարցումների, հարցազրույցների միջոցով վերլուծում է, թե ինչպես է ապահովվում կադրային պլանների համապատասխանությունը անձնակազմի ցանկություններին և սպասելիքներին: Կադրային պլանների մշակման ժամանակ ղեկավարությունը ապահովում է հավասար հնարավորության սկզբունքը ողջ անձնակազմի համար: Ընկերության անձնակազմի հետ իրականացվող աշխատանքներում մեծ ուշադրություն է դարձվում միջազգային փորձի կիրառմանը: Ցանկացած փոփոխություն ուղղված է բարելավելու կենտրոնի կառավարման համակարգը:

Կազմակերպության ընթացիկ և ապագա պահանջների ապահովման նպատակով ղեկավարությունը մշակել և իրագործել է անձնակազմի զարգացման և ուսուցման ծրագրեր:

Ընկերությունը մշակել է միջոցառումներ, որով որոշում և դասակարգում է անձնակազմի գիտելիքները և իրազեկությունը: Աշխատողներին գիտելիքներով զինելու, հմտությունների ու փորձի ձեռք բերելու, նրանց որակավորումը բարձրացնելու նպատակով մշակել է աշխատողների ուսուցման և վերապատրաստման պլանը, որում նախատեսված են ուսուցման նպատակը, ծրագրերը և մեթոդները, ուսուցման անհրաժեշտ ռեսուրսները, աշխատողների իրազեկության բարձրացման գնահատումը, արդյունավետության և ընկերության նպատակների իրականացման համար դրա ազդեցության չափումը:

Բժշկական կենտրոնը սերտ համագործակցում է ԵՊԲՀ-ի, Ավդալբեկյանի անվան Ազգային կենտրոնի, ՀՕՏ-ի, Վանաձորի բժշկական քոլեջի, Հյուսիսային համալսարանի և այլ ուսումնական հաստատությունների հետ:

Ռազմավարության և քաղաքականության կենսագործման նպատակով ղեկավարությունը ներգրավում է անձնակազմին, նրան լիազորելով համապատասխան իրավասություններ, որը ամրագրված է Որակի քաղաքականության մեջ: Կազմակերպությունը պաշտոնական

հրահանգների միջոցով սահմանել է անձնակազմի լիազորությունները, կնքել աշխատանքային պայմանագիր յուրաքանչյուր աշխատողի հետ: Համաձայն հաստատված կանոնակարգի, իրականացվում է աշխատակազմի հետ տարվող աշխատանքների պլանավորում՝ ներգրավելով բոլոր օղակներին, իսկ կատարելագործումը՝ իրականացվում է աշխատակազմի ուսուցման, որակավորման բարձրացման, ինչպես նաև կոնֆերանսների հանդիսավոր միջոցառումների, ցուցահանդեսների մասնակցության միջոցով:

Տեղեկատվության փոխանակման միջոցով ընկերության ղեկավարությունը բացահայտում է անձնակազմի պահանջումները:

Կազմակերպության նպատակներին աշխատակիցները ծանոթանում են ընդհանուր ժողովներում, խորհրդակցություններում, յուրաքանչյուր օր՝ առավոտյան զրույցների, ամենօրյա աշխատանքների արդյունքների ամփոփման ժամանակ, ինչպես նաև անհատական աշխատանքային պայմանագրերով և որակի քաղաքականության, հրամանների, կարգադրությունների ու միջոցառումների պլանների միջոցով:

Բացի այդ, ամեն մի բաժանմունք կամ բաժնի ղեկավար յուրաքանչյուր հերթափոխում կատարում է աշխատանքների ամփոփում, որոնց արդյունքներով ցուցումներ ու հանձնարարական է տալիս աշխատակիցներին, այդ մասին տեղեկացնելով տնօրենին:

Անձնակազմը ակտիվորեն մասնակցում է իրականացվող տոնական և հիշատակի օրերի միջոցառումներին: Մշտապես իրականացվում են ճանաչողական այցեր, էքսկուրսիաներ հանրապետության և Լեռնային Ղարաբաղի պատմամշակույթային օջախներ:

Ղեկավարության կողմից ընկերության աշխատակիցներին առաջարկվում է աշխատանքի ընթացքում ունեցած առաջարկությունները և նախաձեռնությունները պարբերաբար ներկայացնել ղեկավարությանը:

Առաջարկությունները ուսումնասիրվում են ղեկավարության և համապատասխան մասնագետների կողմից: Հավանության արժանանալուց հետո առաջարկությունը ներդրվում է պրակտիկայում, իսկ առաջարկության հեղինակն արժանանում է պարգևատրման: Տեղյակ լինելով վերը նշվածին, ընկերության յուրաքանչյուր աշխատակից անձնական մեծ շահագրգռվածություն է ցուցաբերում նախաձեռնություններով հանդես գալու, կատարելագործելու և անընդհատ բարձրացնելու աշխատանքների որակը:

Բժշկական կենտրոնն իր աշխատակիցների հարմարավետության ապահովման համար կիրառում է ճկուն աշխատանքային գրաֆիկ, կազմակերպում հանգստի բարենպաստ պայմաններ: Ընկերությունում մոնիտորինգի և չափումների հիման վրա որոշվել և նույնականացվել են ղեկավարի կառավարչական, ռեսուրսների կառավարման, ծառայության մատուցման գործընթացները:

Ընկերությունում որոշված են վերը նշված գործընթացների հաջորդականությունը և փոխազդեցությունը, չափանիշներն ու մեթոդները, որոնք անհրաժեշտ են ինչպես այդ գործընթացների իրականացման, այնպես էլ դրանց կառավարման ժամանակ արդյունավետությունն ապահովելու համար: Գործընթացների կառավարումը իրականացվում է յուրաքանչյուր բաժանմունքի ղեկավարի կողմից, յուրաքանչյուր բաժնի գիտի իր աշխատանքային պարտականությունները: Ազգաբնակչության առողջության վերաբերյալ տվյալների ուսումնասիրման, սպառողների հետազոտման և տեղեկատվության ստացման այլ միջոցների օգտագործումով ընկերությունում որոշվում են գոյություն ունեցող բուժ ծառայությունների ներկա և ապագա պահանջումներն ու սպասելիքները:

Սպառողների ապագա պահանջմունքների և սպասելիքների բավարարման համար բուժճառայություններին ուղղված միջոցների կանխատեսման և սահմանման համար նախագծվում և մշակվում են նոր մեթոդներ և նորամուծություններ:

Ընկերությունում գործում է հստակ ընթացակարգ ստեղծագործական գործունեության և ինովացիաների օգտագործման, մրցունակ ծառայությունների մշակողների խրախուսման համար: Բժշկական կենտրոնը մասնագիտացված բուժկանխարգելիչ հիմնարկ է: Այն կոչված է կատարելագործելու և կոորդինացնելու բնակչության առողջության պահպանումը, ինչպես նաև ապացուցելի բժշկության գիտական դրույթների վրա հիմնված նոր տեխնոլոգիաների ներդրումը: Կազմակերպությունում մշակված են յուրաքանչյուր ծառայության տեսակին ներկայացվող կոնկրետ պահանջներ, ընդունման կանոններ, սպասարկման մեթոդներ, որոնք սահմանված են համապատասխան փաստաթղթերով: Առկա են նաև կատարված աշխատանքների վերաբերյալ արձանագրությունները:

Ղեկավարությունը ըմբռնել է սպառողների, գործընկերների և հասարակության պահանջմունքներն ու սպասելիքները և դրանց բավարարման համար մշակվել է միջոցառումներ՝

- Գործընկերների հետ համատեղ գործունեությունների կատարելագործում
- Համատեղ կոնֆերանսների մասնակցություն, աշխատանքների իրականացում
- Համատեղ սեմինարների կազմակերպում

Կատարվող աշխատանքների որակի բարձրացման, եղած հնարավոր թերությունների ի հայտ բերման և վերացման նպատակով, սպառողների կարծիքը հաշի առնելու համար բաժանմունքներում հարցաթերթիկներ են տրամադրվում մատուցված ծառայությունները գնահատելու խնդրանքով:

Ընկերության ծառայությունների ցանկը շատ լայն է ու բազմաբնույթ, սպասարկվում են Հայաստանի քաղաքացիները:

Ընկերության աշխատակիցները մշտական մասնակցություն են ունենում հանրապետությունում և արտերկրներում կազմակերպվող գիտա-գործնական կոնֆերանսների, սեմինարների, համագումարների: Բոլոր բժիշկները ընդգրկված են նեղ մասնագիտական բժշկական միավորումների մեջ և ակտիվորեն մասնակցում են ազգային ծրագրերի մշակմանն ու ներդրմանը, ինչպես նաև հետազոտությունների իրականացմանը:

- Առողջության ազգային քաղաքականության մշակում
- Առողջապահական ժողովրդական հետազոտություն

Շուկայական հարաբերությունների պայմաններում կարևորվում է արտերկրի հետ տեղեկատվության փոխանակման, արտերկրի գործընկերների հետ արագ հաղորդակցման դերն ու նշանակությունը:

Ընկերությունը իր ռազմավարությունը մշակելիս հաշվի է առել հիմնական գործընկերների հետ փոխհամագործակցությանն առնչվող պահանջները: Հարաբերություններն արտաքին գործընկերների հետ հիմնված են փոխշահավետ հարաբերությունների սկզբունքի վրա:

Մերտ համագործակցություն է իրականացվում <<Էրեբունի>>, <<Մուրացան համալսարանական կլինիկա>>, <<Արմենիա>>, <<Միքայելյանի անվան վիրաբուժության ինստիտուտ>>, <<Նորք ինֆեկցիոն հիվանդանոց>>, <<Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոն>>, <<Հանրապետական հակատուր. Դիսպանսեր>>,

Մալայանի անվան «Ակնաբուժական», «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ», «Արաբկիր», «Սուրբ Աստվածամայր», «Նորք Մարաշ», «Մալաթիա», «Հայ Ամերիկյան» բժշկական, ուռուցքաբանության ազգային, պերինատալոգիայի և մանկաբարձության գիտահետազոտական, արյունաբանական կենտրոնների, «Կարմիր Խաչի» Հայաստանյան գրասենյակ, «ՀՕՖ» գրասենյակ, «Յունիսեֆ», «ԱՄՆ» միջազգային զարգացման գործակալություն, ՀՀ ԱՆ «Մարդասիրական կենտրոն», Վորլդ Վիժն, Լոռու մարզի առողջապահական հիմնադրամ, դատա-բժշկական գիտագործնական կենտրոն ՊՈԱԿ-ի, ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ վարկային կազմակերպության, Ալավերդու քաղաքապետարանի, ինչպես նաև Լոռու մարզի բժշկական կազմակերպությունների հետ: Հանրապետության առաջատար բժշկական կենտրոնների, ինչպես նաև հեռավոր բուժակ-մանկաբարձական կետերի հետ առկա է տեսահեռահաղորդակցման մշտական կապ գործընկեր կազմակերպությունների հետ կենտրոնը ապահովում է փորձի փոխանակման և համատեղ հետազոտման աշխատանքները:

ԳԼՈՒԽ 4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Կազմակերպության ղեկավարությունը սպառողների և այլ շահագրգիռ կողմերի պահանջմունքների ու սպասելիքների բավարարման համար անընդհատ կատարելագործում է ընկերության գործընթացները: Ընկերությունում մշակված է համալիր միջոցառումներ սպառողների և այլ շահագրգիռ կողմերի պահանջմունքների ու սպասելիքների բավարարելու համար: Ընկերության կառավարման համակարգի մուտքային տվյալ է հանդիսանում պացիենտը (դիմողը), իսկ ելքային տվյալը դա առողջ քաղաքացին է՝ հիվանդության ապաքինումը: Սա հիմք է հանդիսանում որակի կառավարման համակարգի գործընթացային մոտեցման համար, որը հանդիսանում է անընդհատ բարելավման ու հիվանդի սպասվելիք պահանջների բավարարման գրավականը: Սպառողի լրիվ պահանջմունքներն ու սպասելիքները բավարարու համար ընկերությունում գործում է ցերեկային ստացիոնար, իրագործում է պլանավորում, մասնավորապես՝ ժամանակակից միջոցների ընտրություն և նշանակում, հիվանդությունների ախտորոշում և բուժում: Ազգաբնակչության առողջության վերաբերյալ տվյալների ուսումնասիրման, սպառողների հետազոտման և տեղեկատվության ստացման այլ միջոցների օգտագործումով ընկերությունում որոշվում են գոյություն ունեցող բուժառայությունների ներկա և ապագա պահանջմունքներն ու սպասելիքները: Սպառողների ապագա պահանջմունքների և սպասելիքների բավարարման համար բուժառայություններին ուղղված միջոցների կանխատեսման և սահմանման համար նախագծվում և մշակվում են նոր մեթոդներ և նորամուծություններ: Ընկերությունում գործում է հստակ ընթացակարգ ստեղծագործական գործունեության և ինովացիաների օգտագործման, մրցունակ ծառայությունների մշակողների խրախուսման համար:

ԲԱԺԻՆ III. ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

ԳԼՈՒԽ 5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Բժշկական կենտրոնը մասնագիտացված բուժկանխարգելիչ հիմնարկ է: Այն կոչված է կատարելագործելու և կոորդինացնելու բնակչության առողջության պահպանումը, ինչպես նաև ապացուցելի բժշկության գիտական դրույթների վրա հիմնված նոր տեխնոլոգիաների ներդրումը: Կազմակերպությունում մշակված են յուրաքանչյուր ծառայության տեսակին ներկայացվող կոնկրետ պահանջներ, ընդունման կանոններ, սպասարկման մեթոդներ, որոնք սահմանված են համապատասխան փաստաթղթերով: Առկա են նաև կատարված աշխատանքների վերաբերյալ արձանագրությունները: Սպառողի կողմից բուժման և հետազոտման որակի ընկալումը իրականացվում է սպառողի բավարարվածության ուսումնասիրությունների հիման վրա: Ուսումնասիրություններն իրականացվում են պայմանագրային հիմունքներով, ինչպես նաև բուժօգնության վարկանիշի գնահատման, ստացված երախտիքների ու գանգատների վերլուծության հիման վրա:

Այս տեղեկատվության հիմքն է հանդիսանում կազմակերպության ընդհանուր իմիջը, կապի միջոցների մատչելիությունն ու ճկունությունը, մատուցվող բուժօժանության որակն ու զինը, հուսալիությունը, սպասարկման մոտեցումը, անձնակազմի մասնագիտական հմտությունը:

Ընկերությունը լայնածավալ քարոզչական աշխատանք է տանում առողջության պահպանման, ինչպես նաև հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ: Ընկերության ծառայություններից կրկնակի օգտվելն ու այլ սպառողներին երաշխավորելու ցանկությունը խոսում է սպառողների վարվեցողության և ընկերության իմիջի բարձրացման մասին:

Կազմակերպությունը իր ողջ աշխատանքները և ներուժը ներդրել է սպառողի բավարարվածության ապահովման համար:

Այսօր ընկերությունը իր լիիրավ տեղն ունի ինչպես տարածաշրջանում, այնպես էլ Լոռու մարզում և հանրապետությունում, համարվում է մրցունակ: Սպառողն էլ իր յուրօրինակ և առանձնահատուկ վերաբերմունքն ունի ընկերության և նրա կողմից մատուցվող բուժօժանությունների նկատմամբ:

Ընկերության ծառայություններից օգտվող հիվանդները՝ որակյալ բուժօգնությունից և լավ վերաբերմունքից բավարարված պատմում ու առաջարկում են ընկերության բարի համբավի մասին: Մշտական սպառողները ընկերության հետ գտնվում է շարունակական

փոխհարաբերությունների մեջ: Իրագործում է բարձր, նորմալ և ցածր ռիսկի խմբի հիվանդների, տարբեր հիվանդությունների կանխարգելում, թերապևտիկ և այլ նեղ մասնագիտական՝ ուռուցքային, հիվանդությունների վաղաժամ հայտնաբերում, խորհրդատվական կազմակերպում և բուժում:

Հանրապետությունում գործող խիստ մրցակցության պայմաններում առաջատար տեղը չզիճելու համար ընկերության ղեկավարությունն ու անձնակազմը գիտակցում են, որ առաջին հերթին պետք է մատուցել որակյալ և անվտանգ բուժառայություն:

Ընկերության գործունեության վրա իր ազդեցությունը կարող է ունենալ`

ա).տնտեսության աճը

բ).նվազագույն աշխատավարձի շեմի բարձրացում

գ).համագործակցող ընկերությունների ֆինանսական միջոցների նվազում

դ).բնակչության արտահոսք

ե.).ապահովագրական բժշկության ներդրում

զ.).տուրիզմի զարգացում

է).բազային ծավալի սահմաններում ըստ ծրագրերի գերակատարումներ և թերակատարումների ներքին տեղաշարժի հնարավորություն:

ը).բուժ աշխատողների անվտանգության և իրավունքների ապահովում

1.ներհամայնքային բուժ հաստատությունների օպտիմալացում:

2.Բժշկական կենտրոնի մրցակիցներն են հարևան տարածաշրջաններում գործող բժշկական կենտրոնները,որոնք ներկա պահին չեն ազդում մեր ընկերության գործունեության վրա:

2020-2025թթ զարգացման պլան

1. Լինելով արդյունաբերական խոշոր շրջան՝ հաճախակի են արտադրական և տրանսպորտային տրավմաները: Գանգուղեղային և ողնաշարի վնասվածքների հայտնաբերման, ինչպես նաև ինսուլտների դիֆերենցիալ ախտորոշման և բուժման հարցերը լիարժեք կազմակերպման, հետագա մասնագիտացված բուժ օգնության և տեղափոխման նպատակով ձեռք բերել համակարգչային տոմոգրաֆ:

2. Ծաղկաշատ գյուղի ԲՄԿ-ն հիմնանորոգել և վերազինել:

3. Կոլոնոսկոպի ձեռք բերում
4. Ուազ մակնիշի շտապ օգնության մեքենայի ձեռք բերում
5. TYP –ի ձեռք բերում
6. Արյան ընդհանուր անալիզատորի ձեռք բերում
7. Դիալիզի ներդնում (օգտագործել կյանքի ցուցումով,ցանկության դեպքում վճարովի հիմունքներով)
8. Ստեղծել հաճախումների կառավարման մեխանիզմ
9. Ներդնել ISO 9001 որակի կառավարում
10. Ներդնել գույքի հաշվառման կողավորում
11. *Բոլոր ռենտգեն սարքավորումները թվայնացնել (տեղադրել թվայնացման կենտրոն)*
12. *Ամբուլատոր եղանակով օնկո հիվանդների համար ներդնել պալիատիվ բժշկություն*
13. *Շահագրգիռ կազմակերպությունների միջոցով ստեղծել արագ սննդի սպասարկման կետ,բուժ աշխատողների ընդմիջմանը սնվելու համար*
14. *Մտացիոնար մասի տանիքի և ընդհանուր տանիքի անվտանգության ճաղավանդակի ներկում հակակոռուզիոն նյութով*
15. *Ընկերության բուժ անձնակազմի սահուն սերնդավիճակություն երիտասարդ պրոֆեսիոնալ բուժ անձնակազմով*
16. *Արևային ֆոտովոլտային կայանի տեղադրում*
17. *Վիրաբուժական բաժանմունքում ընդլայնել քիթ կոկորդ ականջաբանական վիրահատությունները, ինչպես նաև կոնսերվատիվ բուժական մեթոդները ներգրավելով մեր հայրենակից Սիրիահայ պրոֆեսիոնալ մասնագետներին(արդեն իսկ կա բանավոր պայմանավորվածություն, մնում են միայն գործնական քայլերը)*
18. *Յուրաքանչյուր բաժանմունքի իրենց գործառույթներին համապատասխան և բնորոշ ,տրամադրել մասնագիտական արտահագուստ (ընկերության լոգոյով)*
19. *Իրականացնել բժշկական կենտրոնի շենքի ներսի կոսմետիկ հիմնանորոգում՝ առաստաղների և պատերի ներկում*
20. *Դրսային ոչ տուֆաշեն հատվածի ընդհանուր ներկում*
21. *Տուր կարինետի ջեռուցման համակարգի տեղադրում (բաքսի)*

22.

Թվային կոլոնոսկոպիա

23.

Արթրոսկոպիկ վիրահատությունների հավաքածու

Հեռանկարային զարգացման պլան

1. Ստեղծել ստոմատոլոգիական տարածաշրջանային կենտրոն՝ վերակառուցելով և վերազինելով նախկին շտապ օգնության մասնաշենքը:
2. Ստեղծել դիետ ճաշարան ստացիոնարում բուժվող սոցիալապես խիստ անապահով հիվանդների համար՝ շուրջօրյա սննդի կազմակերպման նպատակով (իսկ ցանկացողների համար վճարովի հիմունքներով) լվածքատուն վերակառուցելով:
3. Ստեղծել հյուրասենյակներ ՀՀ առողջապահության նախարարության կողմից գործուղված մասնագետների ժամանակավոր բնակության համար՝ վերակառուցելով նախկին ինֆեկցիոն բաժանմունքի մի հատվածը:
4. Ստեղծել բուժ աշխատողների համար հանգստի սենյակ ,հիմնանորոգելով և կահավորելով նախկին կաթսայատունը:
5. Ստեղծել կոնֆերենս դահլիճ հիմնանորոգելով և վերազինելով ԲԿ-ի կենտրոնական մասնաշենքի կիսանկուղը (որը տարածաշրջանում լինելով միակը կարող է նաև տրամադրվել վճարովի հիմունքներով օրվա շահագրգիռ կողմերին):

ԳԼՈՒԽ 6.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացնելու համար անհրաժեշտ է մշակել համալիր միջոցառումների պլան:

I.Բժշկական օգնության և սպասարկման արդյունավետության բարելավում.

ա/քաղաքացուն սեփական բնակավայրին մոտ բուժվելու հնարավորության ապահովում՝ մայրաքաղաք ուղեգրումների թվի նվազեցում մինչև 5 % (բժշկական հաստատության կողմից մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծավալների և տեսակների շրջանակներում)

բ/մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի վերահսկողության մեխանիզմի ներդրում՝ մշտադիտարկման և գնահատման ցուցանիշների միջոցով

գ/կառավարվող բժշկական հաստատության կողմից մատուցվող վիրաբուժական ծառայության տեսակարար կշռի համապատասխանեցում Երևանի առաջատար բժշկական հաստատությունների միջին տարեկան ցուցանիշին

դ/բժշկական հաստատության առնվազն 75% ծանրաբեռնվածության ապահովում՝ 1-2 տարիների ընթացքում, 3-րդ տարուց՝ 85 % և տվյալ համամասնության պահպանում հաջորդ տարիներին

ե/մահճակալի շրջապատույտի ցուցանիշի ապահովում ոչ պակաս քան 40

զ/բուժման միջին տևողության ցուցանիշի ապահովում՝ 5,5-6,5 օր

II .Ֆինանսական արդյունավետության բարելավում.

ա/վճարովի ծառայությունների աճ՝

Ինչի շնորհիվ կավելանա մատուցվող բժշկական ծառայությունների ցանկը և տեսականին: Այն կբերի վճարովի հիմունքներով բուժվող հիվանդների թվի ավելացմանը՝ մարզից այդ հիվանդների արտահոսքի նվազեցման և հարակից տարածաշրջաններից հիվանդների ներհոսքի շնորհիվ:

բ/.Վերանայվում են ընկերության կողմից մատուցվող վճարովի ծառայությունների գները, հաշվի առնելով գնաճը, ինչպես նաև նմանատիպ ծառայությունների համար հանրապետությունում գործող գները:

գ/.կազմակերպության եկամուտների ավելացում

1.Բուժաշխատողների մասնագիտական ունակությունների և հմտությունների շարունակական բարձրացման , բժշկական չափորոշիչների հիմնարար կիրառման , բժշկական էթիկայի և վարվեցողության կանոնների մշտական կատարելագործման արդյունքում, մեծացնել ազգաբնակչության վստահությունը, մատուցվող բժշկական ծառայությունների որակի և արդյունավետության նկատմամբ, ինչը ևս կբերի դիմելիության ավելացման:

2.Հաստիքների նվազեցումը կիրականացվի բացառապես աշխատողների ծանրաբեռնվածության օպտիմալացման և օգտակար գործողության գործակցի ավելացման շնորհիվ: Ինչի արդյունքում կավելանա աշխատակիցների փաստացի եկամուտները և աշխատելու շահագրգռվածությունը:

ե/.Աշխատակիցների վարձատրության ճկուն մեխանիզմների միջոցով, կրճատել սովերային շրջանառությունը, այն բերելով օրինական դաշտ, ինչը կբերի անձնակազմի եկամուտների աճի:

զ/.Բուժաշխատողների անվտանգության, պաշտպանվածության բարձրացման , ինչպես նաև բուժաշխատողների կողմից մատուցվող բժշկական ծառայությունների որակի առավել

բարձրացման ,վարվեցողության կանոնների կիրառման և այցելուների վստահության բարձրացման նպատակով կենտրոնի տարածքում տեղադրել տեսանկարահանող սարքեր:

Է/.Քաղաքացիներին մշտապես իրազեկել իրենց իրավունքների և արտոնությունների վերաբերյալ ,տեսանելի վայրերում պարբերաբար թարմացնել իրավական ակտերում առաջացող փոփոխությունները և գործող թեժ գծերի հեռախոսահամարները :

ը/. Ընկերությունը շարունակելու է խրախուսել և աջակցել հանրապետության և արտերկրի առաջատար կլինիկաներում մասնագետների մասնագիտական որակավորման և նոր հմտությունների ու ծառայությունների գծով վերապատրաստման կուրսեր անցնելուն:

<<ԱԼԱՎԵՐԴՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ

ՏՆՕՐԵՆ

Ս.ՄՈՍԻՆՅԱՆ